10030559

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ**

**ՏԵՂԱԿԱԼ**

375010, ք. Երևան, Վ. Սարգսյանի փ. 5

№ 30/9-318-11

«28» 11 2011 թ.

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
պարոն Ա. ՋԱՎԱԴՅԱՆԻՆ

*Ի պատասխան Ձեր 28.10.2011թվականի*
*15.1-06/1132-11 թվակիր գրության*

*Հարգելի՛ պարոն Ջավադյան*

ՀՀ գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել է «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ դիտողություններ և առաջարկներ չկան:

Կից ներկայացվում է «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության կարծիքը:

Առդիր՝ 2 թերթ.

*Հարգանքով՝*

*Արդարադատության*
*պետական խորհրդական* *Ա. ԹԱՄԱԶՅԱՆ*

ԿԱՐԾԻՔ

**«ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին » ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**

*«ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ առկա են հետևյալ նկատառումները.*

1. Նախագծով քրեականացվել են արարքներ, որոնք իրենց վտանգավորության աստիճանով նվազ կարևոր են և չեն հարող դիտվել որպես հանցագործություն: Իրենց բնույթով դրանք կարող են համարվել առավելագույնը վարչական իրավախախտումներ: Այդպիսիք են Նախագծով սահմանված 204.2 հոդվածով («Առանց որակավորման փորձագիտական եզրակացության /հաշվետվության/ տրամադրելը կամ այդպիսի եզրակացությունը /հաշվետվությունը/ որպես հիմք ընդունելը»), 204.4 հոդվածով («Որակավորում չունեցող անձի կողմից ապահովագրավճարներ ներգրավելը») և 204.9 հոդվածով («Ապահովագրական պատահարի արդյունքում առաջացած վնասի կանխմանն ուղղված միջոցներ չձեռնարկելը կամ վնասի մեծացմանն ուղղված գործողություններ իրականացնելը») նախատեսված արարքները:

2. Նախագծով քրեականացվել են արարքներ, որոնք արդեն իսկ ընդհանուր նորմերով սահմանված են քրեական օրենսգրքում և դրանց առանձնացման անհրաժեշտությունը բացակայում է, առավել ևս, որ քրեականացվող արարքները, մեր կարծիքով, անհիմն կերպով առավել վտանգավոր են ներկայացվել՝ դրանց համար սահմանելով ավելի խիստ պատիժներ: Օրինակ, նախագծի 204.5-րդ հոդվածով նախատեսված արարքը («Ապահովագրության բնագավառում փաստաթղթերի կեղծումը») ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածով («Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների պետհամարանիշների կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը) նախատեսված հանցագործության դրսևորում է և լիովին անհասկանալի է հեղինակների այն մոտեցումը, որի պայմաններում ապահովագրության բնագավառում փաստաթղթերի կեղծումն առավել վտանգավոր է համարվել՝ նախատեսվել է երեքից հինգ տարի ժամկետով ազատազրկում, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 1-ին մասի սանկցիան նախատեսում է առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկում:

2. Քրեականացված արարքների համար սահմանվել են անհամաչափ, չհիմնավորված պատիժներ՝ դրանք անտրամաբանորեն վերածելով ծանր հանցագործությունների: Նշվածի վառ օրինակ են նախագծով առաջարկված 204.3 («Ապահովագրության բնագավառում ակնհայտ սխալ եզրակացություն /հաշվետվություն/ տրամադրելու համար

կաշառելը, հարկադրելը կամ հակելը»), 204.6 («Կեղծ ապահովագրական վկայագրեր և /կամ/ ԱՊՊԱ կտրոններ պատրաստելը, իրացնելը կամ օգտագործելը կամ ապահովագրական վկայագրեր և /կամ/ ԱՊՊԱ կտրոններ հափշտակելը»), 204.8 («Ապահովագրական պատահարի առաջացմանը նպաստելը») և 204.10 («Ապահովագրական պատահարի հանգամանքների կամ հետևանքների ներկայացման վերաբերյալ չարամիտ համաձայնության գալը») հոդվածները:

*Այսպիսով, ներկայացված նախագիծը խաթարում է արարքների քրեականացման, պատժելիության համակարգային մոտեցումները և այն կարիք ունի վերանայման:*

**Հայաստանի Հանրապետության**
**գլխավոր դատախազություն**